

## ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԷՋՆԱԳԱՐՅԱՆ ՌՈՒՄԱՆԻՈ ԳԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԷՆ ՄԵՋ

Գ. ՂԺՐԻՖԻԱՆ (Բուխարեստ)

Ուսումնասիրելով հայերու դերը ռումէն իշխանապետութեան մէջ, դիտեցեալները ծանրացած են ավելի տնտեսական-առևտրական կյանքի վրա, բայց հայերը կարևոր դեր ունեցած են նաև ուրիշ մարզերու, ինչպէս, օրինակ, դիվանագիտութեան մէջ:

Սույն էջերուն մէջ պիտի ջանանք ներկայացնել հայերու դիվանագիտական գործունէությունը և անոնց բերած նպաստը ռումէն իշխանապետութեանց քաղաքական կյանքին մէջ: Կհուսանք, որ ապագային ռումանահայ դադուքի պատմութեան այս մասի մասը պիտի լուսարանվի ավելի հանդամանորեն:

### 1. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԳԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բազմադարեան իշխանութեան անկումէն վերջ կսկսի հայերու գաղթը դեպի Սև ծովի ավազանի հյուսիսային մասի զանազան շրջանները: Հաջորդ դարերու ընթացքին հայերը կհաստատուին Վոլդայի հարավային կողմերը, ինչպէս և Ղրիմի թերակղզին կանցնին, այստեղ հաստատուելով ճենովացիներուն թով, որոնք առևտրական մեծ կեդրոն մը ստեղծած էին: Ղրիմի հայ գաղութը կարևոր տեղ մը կդրավ սփյուռքահայութեան միջնադարեան պատմութեան մէջ, ըլլալով առևտրական-տնտեսական և մշակութային կարևոր կեդրոն մը:

Ղրիմի հայերու առևտրի առարկան Արևելքի և Արևմուտքի միջև առևտուրը կհանդիսանար: Այս առևտուրի ճամբան կանցներ Մոլտովայէն, ուրտեղ հայերը հաստատուած են սույն առևտրական ճամբու միջոցով:

Արևելքը Արևմուտքին միացնող առևտրական ճամբաները թիվով երկու են. առաջինը «թաթարական ճամբան», որ Ղրիմի Կաֆիտն կմիացնէր Լվովին, այսպէս կկոչվէր, որովհետեւ մինչև Ղրիմի թաթարներուն կտանէր, իսկ երկրորդը՝ Լվով, Մոլտովա, Գալաց (Դանուբ) և կամ Լվով, Մոլտովա, Սև ծովի նավահանգիստները (Մոնթասթրի և Լիոսթոմո): Այս երկրորդ ճամբան կկոչվէր «մոլտովական»: Ինչպէս կարելի է նկատել, Արևելքի և Արևմուտքի միջև առևտուրի հանգույցը Լվով քաղաքը կհանդիսանար: Այստեղ 1300-էն առաջ, երբ քաղաքը տակաւին չհակահարկաւորութեան տակ չէր գտնվեր, կային ռուսեր, հայեր, հրեաներ, թաթարներ և այլ ազգութիւններ:

Իրենց առևտուրը ապահովելու համար վաճառականները ջանացին մոլտովական ճամբան ապահովել: Այս ուղղութեամբ 1408 հոկտեմբեր 8-ին, Մոլտովայի մայրաքաղաք Սուչավայի մէջ Ալեքսանդրու չէլ Պուն (Բարի) իշխանի լիազօրները և Լվովի ներկայացնող զանազան ազգութեանց պատկանող շորս առևտրականներ — որոնցմէ մեկը հավանաբար հայ էր — մոլտովական ճամբու մասին պաշտօնաբար մը կկնքեն, ուր կճշդվին ո՛ր քաղաքներու մէջ և ո՛րքան պիտի առնվի մաքսը<sup>1</sup>:

Այդ շրջանի ընթացքին առևտուրը կարավաններու միջոցով կկատարվէր: Կարավանները կազմված էին ապրանքով բեռնավորված ձիաքարշ սայլերէ: Իրենց ճամբուն վրա գտնվող զանազան տեղեր, որոնք մենզիլ կկոչվէին, կարավանները իրենց սեփական ձիերը ունէին զոր կփոխէին: Կային նաև կարավանսերայիններ, ուր կարավանները քննութեան կենթարկվէին և մաքսը կորոշվէր: Ավելի ուշ կարավանսերայինները վարձան իջեցան: Կարավանները գլխավորող

<sup>1</sup> N. Iorga, Istoria comerțului rominesc, vol. I, București, 1925, էջ 82:

անձերը կկոչվեին կարավանրաշիններ և անոնք լավ ծանոթ էին լեզվին և սովորություններուն այն երկիրներուն, որոնց մեջին իրենց կարավանը պիտի անցներ։ Սայլապանները միաժամանակ փորձված անձեր էին, վստահելի և հմուտ, որոնց շատ անգամ հսկայական հարստություններ կհանձնվեր<sup>1</sup>։ Կարավանրաշինները մեծ իրավունքներ ունեին կարավանին մասնակցողներու վրա, խրավունքներ, որոնք պաշտոնական բնույթ կստանային, եբբ Մուտովայեն կանցներին, ռումեն իշխանները կարավաններու անվտանգության հսկողության համար կտրամադրեին զինվորներ, որոնք կարավանին կընկերանային<sup>2</sup>։ Որովհետև ռումեն իշխանները շահ կակրկալեին այս կարավաններեն և անոնցմե առնված մարսերը բավական մեծ գումարներ կկազմեին և կհարստացներին երկրի գանձարանը, անոնք կքաջալերեին և կպաշտպանեին կարավաններու անցըր իրենց երկրեն։

Ռումեն իշխանապետությանց առևտուրը իշխանապետությանց հիմնադրութենեն մինչև 1918 դարը կկատարվեր Կ. Դրոնական և Արևմտյան Եվրոպայի զանազան երկիրներու (Թրանսիլվանիա, Լեհաստան, Ճենովա, Վենետիկ) հետ։ Ռումեն իշխանապետությունները կով, ձուկ և մեղրամոմ կարտածեին և ցորեն և երկաթ (զենքեր և գործիքներ) կներածային։ Մեծ կարևորություն կներկայացներ նաև տարանցիկ առևտուրը. օրինակ, եվրոպական կտավներու և կերպասներու և արևելյան զանազան համեմներու անցըր<sup>3</sup>։ Այս շրջանին է որ հայերը, ծանոթ լլլալով Արևելրի լեզուներուն և սովորություններուն, մեծ դեր խաղացած են, իսկ ավելի ուշ՝ հույն վաճառականներն են, որոնք զբաղած են ռումեն իշխանապետությանց առևտուրով։ Հայ առևտրականները ունեին նաև նավեր, որոնք Սև ծովի նավահանգիստներեն (Քիլիա և Չեթաթեա Ալպը) իրենց ապրանքները կտանեին Կ. Պոլիս կամ ավելի հեռու։

Հայտնի է, որ 1445-ին Չեթաթեա Ալպրի (Ակկերման) մեջ հայերու պատկանող բազմաթիվ առագաստանավեր կային, որոնցով հայ առևտրականները ապրանքներ կտեղափոխեին<sup>4</sup>։

Հայկական կարավանները ծանոթ են ռումեն վավերաթուղթերու մեջ „care armenești“ (հայկական սայլեր) անվան տակ։ Շատ փաստաթուղթեր կհիշեն հայկական սայլերը և կարավանները։ 1557-ին լեհական պատվիրակություն մը, որ էրասմ Օտվինովսքիի գլխավորությամբ գեպի Թուրքիա կերթար, կհանդիպի հայկական սայլերու<sup>5</sup>, որոնք կընկերանային դիվանագիտական գործակալներու, վասնզի այս ձևով ապահովությունը ավելի մեծ էր և մյուս կողմի հաճախ այդ գործակալներու միջնորդությամբ մաքսե կազատեին։ 1552-ին նույնպես լեհական պատվիրակության մը կընկերանան հայ առևտրականներ մաքսի զեղչ ունենալու համար։ Ըստ ոմանց, Լվովի համար կարավաններով առևտուրը հայերու մենաշնորհն էր, իհարկե նկատի ունենալով միայն առևտուրը Արևելրի հետ<sup>6</sup>։

Հայկական կարավանները նշանակալից դեր ունեցան Մուտովայի քաղաքներու բարգավաճման համար։ Այսպես, Ռուման քաղաքը հիմնված է ԺԴ դարու վերջավորության մասնավորապես հայերու կողմից<sup>7</sup>։ Հայերը դեր խաղացած են որպիսզի Բոթոշան գյուղը դառնա քաղաք և առևտրական կեդրոն<sup>8</sup>։

Շրջելով երկրե երկիր իրենց ապրանքները ծախելու կամ նորերը ճարելու համար, հայ առևտրականները ստիպված էին ծանոթանալ իրենց անցած երկիրներու լեզուներուն և սովորություններուն։ Իրենց ապրանքները ավելի լավ պայմաններու մեջ ծախելու համար հայերը, բոլոր առևտրականներուն պես, ունեին դիվանագիտական ձիրքեր։ Միևնույն ժամանակ գիտնալով լեզուներ անոնք սկսած էին դիվանագիտական պաշտոններ ունենալ։ Սկիզբեն անոնք նամակներ տարած կամ բերած են, հետո այդ նամակներուն առընթեր բերանացի հրահանգներ

<sup>1</sup> Wladislaw Lozinski. Patricjat i mieszezanstva, Lwow, 1902, էջ 285—306։

<sup>2</sup> N. Iorga, Istoria rominilor prin calatori, ed. II, vol. I, Bucuresti, 1928, էջ 86։

<sup>3</sup> P. P. Panaitescu, Viața feudală în Tara Românească Si Moldova (sec. XIV—XVII), București, 1937, էջ 63—65։

<sup>4</sup> N. Iorga, Istoria rominilor prin calatori, I, էջ 70։

<sup>5</sup> P. P. Panaitescu, Calatori poloni în Tarile Române, Bucuresti, 1930, էջ 6—9։

<sup>6</sup> Fr. Macier, Rapport sur une mission scientifique. Revue des études arméniennes, 1927, էջ 62։

<sup>7</sup> N. Iorga, Patru conferințe despre Armenia, Bucuresti, 1929, էջ 23։

<sup>8</sup> N. Iorga, Istoria poporului românesc, Traducere din limba germană, București, 1922, էջ 235։

ալ ստացած են և այսպեսով դարձած են դիվանագիտական գործակալներ։ Ուրիշները իրենց լեզվագիտությամբ նախ թարգման եղած են, հետո՝ դիվանագետ։

ԺՆ—ԺԷ դարերու ընթացքին կային բազմաթիվ հայեր, որոնք Եվրոպայի հարավ-արևելյան կողմերը որպես թարգման կամ դիվանագիտական գործակալ կոգտագործվեին։ 1476, դեկտ. 11-ին կհիշվի Սթեֆրո անունով հայ մը, որ թարգման էր<sup>1</sup>։ 1528-ին կգտնենք հայ մը, որ թարգման էր սուլթանին (Iwasil Armenus, nuncius et interprete)<sup>2</sup>, որ իր տիրոջ հրամանով կհամարողեր իբրեւ դիվանագիտական սուրհանդակ։ 1636-ին և 1639-ին լվովցի հայ մը Բոմաշ-յեիշ անունով (Boma-zkiewicz) լեհական պատվիրակությանց կողմէ իբրեւ թարգման օգտագործված է<sup>3</sup>։ Ան ձգած է տեղեկաբերություն մը իր կատարած պաշտոնին շուրջ, որ հրատարակված է<sup>4</sup>։ Լվովի մեջ գոյություն ունեւ թարգմաններու կազմակերպություն, որուն գլուխը ավագ թարգման մը կգտնվեր։ Փաղաքային վարչությունը կհսկեր անոր գործունեությանը, իսկ ավագ թարգմանը պետական թարգման համարված էր<sup>5</sup>։

Լվով կարևորագույն կեդրոնն էր, որ Եվրոպան կկապեր Արևելքի հետ, հետևաբար շատ պետք ուներ լեզուներ գիտցողներու, որոնք կապ հաստատեին արևելյան երկիրներու հետ։ Եթե գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն գիտցողներ շատ կային Լվովի մեջ, արևելյան լեզուներու կտիրապետեին առավելապես հայերը, որոնց մենաշնորհը դարձավ, կարճ ժամանակի ընթացքին, Արևելքի հետ առևտուրը և թարգմանչական գործը։ Այս առևտրականներուն կողմէին լեհական իշխանությունները, երբ թարգմանի պետք կունենային արևելյան երկիրներու մեջ կատարվելիք պաշտոններու համար, և այսպեսով է, որ հայ վաճառականները գրավելով իշխանությանց վստահությունը, կդառնային դիվանագետներ։ Լվովի հայերը, ինչպես պիտի տեսնենք, թարգմանիչներ տվին թե Մոլոտովայի, թե Մունթենիայի մեջ, որոնցմէ ոմանք կարևոր դիրքեր գրավեցին այս իշխանությանց դիվանագիտության և քաղաքականության մեջ։

Նույնիսկ Պետրոս Գրիգորովիչը, որու մասին մանրամասնորեն պիտի անդրադառնանք, վարժ և հմուտ դիվանագետ ըլլալով, գրադած է վաճառականությամբ ալ, երբ իր ստանձնած պաշտոնները ներած են։ Ավստրիական արքունիքին համար Պետրոս Գրիգորովիչը 1601-ին եղև տարած ու ծախած է, որոնց փոխարժեքը մինչև իր մահը չէ ստացած։ Կան վավերաթուղթեր, որոնք կապացուցանեն թե Բուտուֆ Բ կայսրը Պետրոս Գրիգորովիչին 5808 ֆիորին պարտական էր<sup>6</sup>։ 1607 մայիս 12-ին ան չէր ստացած իր վարձատրությունը և այս ուղղությամբ բողոքը մը ուղղած է կայսեր<sup>7</sup>։ Կտեսնենք ուրեմն, որ մեկ կողմէ՝ առևտրի նվիրված որոշ թիվ հայեր երբեմն դիվանագիտությամբ ալ կղբաղեին, իսկ մյուս կողմէ՝ անոնք, որոնց գլխավոր զբաղմունքը դիվանագիտությունն էր, ատեն-ատեն կդառնային իրենց առևտրին։

## 2. ՔԱՋՆ ՄԻՆԱՅ ԵՎ ԻՐ ԳԻՎԱՆԱԳԻՏ ՊԵՏՐՈՍ ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

Ժ2 դարու վերջավորության Եվրոպայի մեջ կկազմվի Սուրբ Ընկերությունը, կամ Քրիստոնեական լիգան (La Lique Chretienne), որուն կմասնակցեին պապը, Ավստրիան, գերմանական պետությունները, Սպանիան և քանի մը իտալական դքսություններ։ Ընկերության մասնակցողները կպայքարեին թուրքերու դեմ, բայց իրականության մեջ ամեն մեկ երկիր կհետապնդեր իր շահերը։

<sup>1</sup> N. Iorga, Studii Si documente cu privire la Istoria Rominilor, vol. XXIII, Bucuresti, 1913, էջ 311։

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 4 և 50։

<sup>3</sup> P. Panaitescu, Calatori poloni, էջ 22։

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 33—35։

<sup>5</sup> Н. Кривонос, В. Грабовецкий, Армянская колония во Львове в XIV—XVIII веках (Հայկական ՍՍԻՒ ԳԼ Ժողովագիր (հաս. գիտ.), № 12, 1958, էջ 60։

<sup>6</sup> Documente privitoare la Istoria Ardealului, Moldovei Si Tarii Rominesti, publicate de Dr. Andrei Veress, vol. VI, Bucuresti, 1933, էջ 443—444 (այսուհետև՝ Andrei Veress, Documente)։

<sup>7</sup> Andrei Veress, Documente, VIII, Bucuresti, 1935, էջ 14—15։ Ուրիշ վավերաթղթեր ևս կապացուցանեն այս պարտքը, օրինակ, Andrei Veress, Documente, VI, էջ 435, Andrei Veress, Documente, VII, Bucuresti, 1934, էջ 131, 174, 191, 192։

7 Հանդես. № 3

Սուրբ Բնկերությունը Եվրոպայի հարավ-արևելյան մասին մեջ ալ ջանաց համակիրներ և թուրքերու դեմ պայքարողներ փնտրելու Այսպես, 1594 թ. փետրվարին, Քրանսիականի Սիգիսմունդ Բաթորի իշխանը հարեցավ բնկերության, իսկ 1594 թ. օգոստոսին՝ Մոլտովայի Արոն իշխանը Արոնին այցելած էին երկու պատվիրակություններ, առաջինը պապին կողմն, որ անցնելով Մոլտովայեն հասավ մինչև Կիև, իսկ երկրորդը Ավստրիո կայսեր կողմն ղրկված՝ որ Արոնի հետ բարեկամության դաշինք մը կնքեց<sup>1</sup>։

Վերոհիշյալ պատվիրակությունները չայցելեցին Մունթենիա, ուր կիշխեր Միխայ, որովհետև զայն շատ կապված կսեպեին թուրքերու հետ։ Միխայ ինքը սկսավ կապ հաստատել բնկերության հետ։ Այն պատվիրակներ ղրկեց Բաթորիին և Արոնին խնդրելով, որ զինքն ալ իրենց համակիրը նկատեն և հավաստիացուց զանոնք, որ պատրաստ է պայքարելու թուրքերու դեմ, որ երկրին ամբողջ հարստությունները կյուրացսեն։

Քրանսիականի Սիգիսմունդ Բաթորի իշխանը բավականաչափ զորեղ էր և իր հսկողության տակ առավ Մունթենիան և Մոլտովան։ Այս իշխանապետությանը իշխանները բնդունեցին, որ իրենք Ս. Բաթորիի տեղակալներն են<sup>2</sup>։ Իրապես Բաթորիի տիրապետությունը Մոլտովայի և Մունթենիայի վրա միայն ձևական էր և ամուր հիմք մը չէր կրնար կազմել թուրքերու դեմ մղված պայքարին մեջ։

1594-ին ուսմեն 2 իշխանները, Միխայ և Արոն, նախապես հասկցված Ս. Բաթորիի հետ, իրենց թուրք պարտատերերը կհավաքեն, կփակեն զանձատան մեջ և կրակ կուտան շենքերու։ Այս ձևով Մոլտովան և Մունթենիան պատերազմի մեջ մտած կրկային Օսմանյան կայսրության հետ և թուրքերը շուշացան այս րմբոստությունը պատժելու։ 1595-ին թուրքերը մեծ արշավ մը կկազմակերպեն Սինան վաշա վեզիրի գլխավորությամբ, ուսմեն երկու իշխանապետությունները փաշալրքներու վերածելու նպատակով։ Սինան իր զորքերով կանցնի Դանուբը, որովհետև Միխայ բոլորովին մինակ ըլլալով չէր կրցած Սինանը ետ մղել։ Թուրքերուն և Միխայի զորքերուն միջև կռիվը տեղի ունեցավ 1595 օգոստոս 13-ին Քրուզդրենի գյուղին մոտ, Դանուբի գաշտին վրա, ճահճախուտ շրջանի մը մեջ։ Միխայ հաղթեց թուրքերուն, իսկ Սինան քիչ մնաց խրեք ճահճներու մեջ։ Այս հաղթանակը մեծ արձագանք ունեցավ Արևմտյան Եվրոպայի քաղաքական շրջանակներուն մեջ։ Սակայն միխայ չկրցավ թուրքերը վտարել երկրեն՝ անոնց զորքի բազմության պատճառով։ Անոնք գրավեցին Պուրբեշը և Թրևկովիշեն՝ երկրի կարևոր քաղաքները։ Սիգիսմունդ որ խոստացած էր օգնել Միխային, բոլորովին մոռցավ զայն և ոչ մեկ զինվոր ղրկեց։ Միայն այն ժամանակ, երբ վտանգը իր սահմաններուն մոտեցավ, Սիգիսմունդ չկսավ շարժիլ և օգնեց Միխային։

Տեսնելով Սիգիսմունդի քաղաքականության մակերեսայնությունը, Միխայ ուրիշ հովանավոր մը փնտրեց և գտավ հանձին Լեհաստանի։ Այս նպատակով Միխայ զադտնի կերպով<sup>3</sup> Լեհաստան ղրկեց Պետրոս Գրիգորովիչը՝ Լեհաստանի բարեկամությունը շահելու համար։ Պետրոս Գրիգորովիչի միջոցով Միխայ նվաճեց, որ Լեհաստանի պաշտպանության տակ մտնե, մանավանդ որ Սիգիսմունդ ոչ մեկ ձևով չէր օգնել իրեն<sup>4</sup>։ Քրուզդրենի կռիվն ժամանակ (1595 օգոստոս) Պ. Գրիգորովիչը Լեհաստան կգանվեր։ Ըստ մեր ձեռքի տակ ունեցած գրականության, Պ. Գրիգորովիչի կատարած առաջին հանձնառությունն էր Միխայ զիմած էր Գրիգորովիչին նկատի առնելով անոր լվովցիի հանգամանքը։

Սիգիսմունդ անդրադառնալով վերջապես իր սահմաններուն մոտեցող թրքական վտանգին, կորոշե օգնել Միխային։ Այն զորախումբ մը կղրկե Մունթենիա։ Խումբին մեջ կային նաև իտալացի (թոսքանացի) վարպետներ, բոնր հմուտ էին բերդաքաղաքի պաշարի ավերման մեջ։ 1595 հոկտեմբեր 29-ին, թուրքերը բոլորովին կվտարվին երկրեն։

Միխայ իր զորքով կանցնի Դանուբի հարավային կողմը և կավերե սահմանակից բերդաքաղաքները (Պլեվնա, Վիդին, Նիքոբոլ)։ Տեսնելով այս հաջողությունները և մյուս կողմն ներքին ապստամբություններն շատ նեղված, թուրքերը ստիպված են 1596-ին Միխայը ճանչնալ իբրև Մունթենիայի իշխան և անոր հանձնել իշխանության գրոշը։ Այսպիսով Միխայ կազատի իր հարավային գրացիի նվաճողական քաղաքականությունն և իր բոլոր ջանքերը կթափե միացնելու համար ուսմեն երեք իշխանապետությունները։

<sup>1</sup> Mihail Roller, Istoria R. P. R., Bucuresti, 1952, էջ 165։

<sup>2</sup> N. Iorga, Istoria Românilor, 1937, Valenii de Munte, էջ 233—234։

<sup>3</sup> N. Iorga, Istoria lui Mihai Viteazul, Bucuresti, 1935, vol. I, էջ 194—195։

<sup>4</sup> P. P. Panaitescu, Mihai Viteazul, էջ 140։

1597 տարվույն ընթացքին Սիգիսմունդ Բաթորի, ավստրիացիներու Բուտուլֆ Բ (1576—1612) կայսեր հետ միացած Միխայ կայսրսրի թուրքերուն դեմ, զանոնք Բալքանյան թերակղզիի հյուսիս-արևմտյան կողմէն վտարելու համար:

1598-ի ամառը Միխայ նոր առաքելություն մը կհանձնե Պետրոս Գրիգորովիչին՝ Իշխանը կղերկե զինքը Ալրա-Իուլիա (քաղաք մը Թրանսիլվանիո մեջ), որպեսզի կայսերական պատվիրակներուն իմացնե Միխայի և թաթարներու խոնին միջև կնքված դաշինքին բովանդակությունը՝ Վերադարձին Պ. Գրիգորովիչ մաս կառնե Միխայի թուրքերուն դեմ սկսած արշավանքին:

Միխայ, շեղորացնելու համար հարավային սահմանները գտնվող թուրքերը, ինքը կներխուժե այս շրջանները և կավերն շատ մը քաղաքներ: Այս կռիվներու մասնակցեցավ նաև Պետրոս Գրիգորովիչ իբրև ջոկատի մը հրամանատար: Դեպքին ժամանակակից մատենագիր մը կգրե. «Id Petrus Armenus, qui nonnullae militum cchorti in exercitu Michaelis prae-fuit, vere testatur» (Ինքը Պետրոս Հայր, որ շատ մը զորախումբերու հրամանատարն էր, իսկապես կվկայե): Այս արշավը ամրացուց Քաջն Միխայի համբավը Եվրոպայի մյուս երկիրներու և մանավանդ Ավստրիո մեջ:

1598 թ. աշունը նոր իրարանցումներ կրերն Թրանսիլվանիո մեջ: Գոհ չըլլալով իր նոր դիրքէն Սիգիսմունդ Բաթորի կվերադառնա Թրանսիլվանիո դահլ, այս անգամ սակայն թուրքերու բարեկամությունը շահելու նպատակով: Այս մտադրությամբ ան սուրհանդակ կղերկե Կ. Պոլիս (հանձին Շիկֆան Օվարիի)<sup>3</sup>, թուրքերու հետ միանալու համար: Այս միացումը եթե տեղի ունենար բնավ ախորժելի չպիտի ըլլար Միխայի համար: Ան դիմեց ավստրիացիներուն զինքը վտանգե ազատելու համար: 1598 հոկտեմբերի սկիզբը, Պետրոս Գրիգորովիչ կղերկվի Պրագա, Մարսիմիլիան արհիդուքսին, Երկու նպատակներ հետապնդելու. ա) կայսրը արտոնություն տա որպեսզի Միխայ գրավե Մուտովան<sup>4</sup>, բ) Միխայ պատրաստ ըլլա պաշտպանելու Թրանսիլվանիան, որպեսզի ավստրիացիները չկորսնցնեն զայն<sup>5</sup>: Ավստրիացիները կհամաձայնին Երկրորդ առաջարկին, իսկ առաջինը անպատասխան կձգեն: Պետրոս Գրիգորովիչի ճամբորդությունը այնքան սլ զյուրին չէր անցած: Չէի համար, որպեսզի Սիգիսմունդ չկռահե, Պետրոս Գրիգորովիչ կանցնի Լեհաստանէն<sup>6</sup>: Բայց Սիգիսմունդ հաջողեցավ բռնել Պ. Գրիգորովիչը և վար գրավ զինքը: Միխայ, իմանալով, անմիջապես սուրհանդակ մը կղերկե, ըսելով, որ իր դիվանագիտական գործակալին ձերբակալումը պիտի վնասե Երկու երկիրներուն ալ: Սիգիսմունդ կպարտավորվի ազատ արձակել Պ. Գրիգորովիչը և բռնության տակ հայ դիվանագետը կստիպվի նամակ մը գրել Միխային, որուն մեջ կհավաստիացնե անոր, որ ինքը Սիգիսմունդ, Միխայի հանդէպ հավատարիմ ու բարյացակամ է: Պ. Գրիգորովիչ կգրե այս բովանդակությամբ նամակ մը, բայց վերջավորության Երկու տող հայերէն ավելցնելով՝ Միխային հասկցնել կուտա, որ նամակը ինքնագլուխ չէ գրած, այլ ազդված Սիգիսմունդի ճնշումներէն:

1598, հոկտեմբեր 1-ին Պ. Գրիգորովիչ կներկայացնե իր իշխանին մեկնությունները Մարսիմիլիան արհիդուքսին<sup>7</sup> և նույն օրը արհիդուքսը կպատասխանէ<sup>8</sup>. քանի մը օր վերջ Մարսիմիլիան հոկտեմբեր 6-ին կայսեր կհասցնուի Պ. Գրիգորովիչի պատմագրության բացատրությունները<sup>9</sup>, իսկ հոկտեմբեր 8-ին Պ. Գրիգորովիչ կվերադառնա զադունի նամակով մը՝ Մարսիմիլիանի կողմէ Միխային ուղղված<sup>10</sup>:

Սիգիսմունդ Բաթորիի փոփոխական քաղաքականությունը և անհաստատ նկարագիրը կրկին իրարանցումի տեղի կուտա Բալքանյան թերակղզիի հյուսիսային շրջաններուն, հատկապես Թրանսիլվանիո մեջ: Սիգիսմունդ այս անգամ ևս կհրաժարի իր գահէն (1599 մարտ) և իր տեղ

<sup>1</sup> I. Craciun, *Cronicarul Szamoskozy Si insemnarile sale privitoare la romini* (1566—1608), Cluj, 1928, էջ 35:

<sup>2</sup> Szamoskozy, II, էջ 162, ըստ Dr. Ion Sîrbu, *Istoria lui Mihai Viteazul*, vol. II, Bucureşti, 1907, էջ 80:

<sup>3</sup> I. N. Iorga, *Istoria lui Mihai Viteazul*, I, էջ 273—274:

<sup>4</sup> A. D. Xenopol, *Istoria lui Mihai Voda Viteazul*, Bucureşti, 1915, էջ 127:

<sup>5</sup> P. P. Panaitescu, *Mihai Viteazul*, էջ 147:

<sup>6</sup> N. Iorga, *Basta Si Mihai Viteazul*, Bucureşti, 1895, էջ 27:

<sup>7</sup> Hurmuzaki, *Documente*, XII, էջ 395—397 (DCVII).

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 398—400 (DCVIII).

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 403—404 (DCXVI).

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 407—408 (DCXIX).

կնշանակե Լեհաստան գտնվող իր մեկ եղբորորդին՝ Անդրեյ Բաթորի անունով քսանամյա կարտինալ մըն։ Երիտասարդ կարտինալը հայտնի էր իր թրքասիրությամբ, որով Միխային ոչ մեկ ռզուտ չէր կրնար բերել։ Հավատարիմ իր ավանդական դանդաղության, ավստրիական քաղաքականությունը չէր աճապարել միջոցներ ձեռք առնել պատժելու համար անկայուն Սիգիսմունդը, այնպես որ կարտինալը ազատ կերպով կապ հաստատեց թուրքերուն հետ, իսկ Միխայ ստիպված եղավ անոր հովանավորության տակ մտնել։ Բայց այս գրությունը տևական չէր կրնար ըլլալ և Միխայ սկսավ միջոցներ փնտրել ազատվելու համար երկերեսանի կարտինալներ։ Միակ միջոցը Թրանսիլվանիո գրավումն էր և Անդրեյ Բաթորի շեղբորացու մը Այս ձևով Միխայ կիրականացնէր ուսման կեդրոնացած սրտության առաջին քայլը, Թրանսիլվանիան միացնելով Մունթենիային։ Ավստրիո կայսեր արտոնությունը ստանալու համար Միխայ, Պետրոս Գրիգորովիչը Գրագա կղզե կայսեր հետ տեսակցելու և անոր ալ օժանդակությունը խնդրելու համար, Պատվիրակության մաս կկազմեր նաև Սթոյրիցա գանձապահը<sup>2</sup>։ Անոնք կներկայանան կայսեր և կրացատրեն թե ավստրիացիք և Միխայ, երկու կողմնն պետք է գրավեն Թրանսիլվանիան։ Կայսրը կհամաձայնի և իր կողմն կնշանակե Պասթա ղորավարը իբրև կայսերական բանակի հրամանատար։ Պատվիրակները կվերադառնան և 1599 օգոստոսին կայսեր պատասխանը Միխային կհանձնեն Փոլսի շրջի մեջ<sup>3</sup>։ 1599 հուլիս 2-ին Վիեննայի մեջ Պ. Գրիգորովիչ տեղեկաբերություն մը կներկայացնե Մաքսիմիլիան արհիդուքսին իր պատվիրակության և Մունթենիայի գրության մասին<sup>4</sup>։ Քանի մը օր ավելի ուշ կայսրը Պ. Գրիգորովիչին գովասանքով կխոսի Միխայի՝ բրիտանություն համար տարած եռանդուն պայքարի մասին։ Պետրոս Գրիգորովիչի վերադարձին, Միխայ պատրաստ էր պատերազմելու Անդրեյ Բաթորի հետ։ Եվ իսկայն Միխայ կանցնի Կարպաթները և կարտինալի հետ կռիվը (կարտինալը պատրաստված չէր) տեղի կունենա Շելրնպերկ կամ Շելիմպեր գյուղին մոտ 1599 հոկտ. 18-ին։ Միխայ կհաղթե, իսկ կարտինալը կփախի, բայց կրոնվի իր ներքին թշնամիներուն կողմն և կսպանվի։ Միխայ հաղթական կերպով կմտնե Ալբա-Իուլիա (նոյեմբեր 1-ին) և կընդունվի իբրև կայսերական տեղակալը։ Ճշգրտու համար Թրանսիլվանիո վիճակը և ուրիշ գումարներ պահանջելու նպատակով Միխայ կրկին կայսեր կղրկե Պ. Գրիգորովիչը։ 1599 նոյեմբերին Պ. Գրիգորովիչ կգտնվի կայսեր մոտ։

Հայ գիտնագետը պաշտոն ուներ հետևյալ հանձնարարությունները իրագործելու։ Անդրեյ Բաթորի պարտության լուրը տանիլ, դրամ պահանջել (կայսրը 75.000 թալեր-գերմանական քրամ պարտական էր Միխային, բայց կայսերական գանձատունը բոլորովին պարսպ էր)<sup>6</sup>։ պարտաված կարտինալին և անոր զորքին դրոշակները հանձնել կայսեր, և մանավանդ հավաստիացրենել կայսրը, որ ինք, Միխայ, միտք չունի Թրանսիլվանիան իրեն համար պահել, այլ իր միակ նպատակն է թուրքերուն դեմ պայքարել, իսկ Թրանսիլվանիան կանցնի կայսեր խնամքին։ Շատ բնական է, որ կայսրը մեծ տրախություն մը րնչունեց վերջին առաջարկը և շնորհավորություններով պատասխանեց<sup>7</sup>։ Քիչ վերջը սակայն, ղինքը շրջապատող ազնվականներու ազդեցության տակ, որոնք Թրանսիլվանիո ազարակները, հարուստ հողերը և նորուրը կուզեին ձեռք անցնել, Միխայ կխորհի իր և իր հաջորդներուն համար պահել Թրանսիլվանիան, ինչ որ ավստրիացիները պիտի չընդունեին։

Պետրոս Գրիգորովիչը կայսեր ներկայացնող վավերագիրը պահված է։ Այստեղ հայ գիտնագետը շատ լավ գույներով ներկայացված է և անոր մասին կրսվի թե «մասնագետ էր ոչ միայն կայսերական արքունիքին հետ կապված հարաբերությանը համար, այլ նաև իբրև լեհական, մոլոտական, թաթարական և թրքական խնդիրներու ալ»<sup>8</sup>։

<sup>1</sup> N. Iorga, Istoria Romînilor, Valenii de Munte, 1937, էջ 245—246։

<sup>2</sup> P. P. Panaitescu, Mihai Viteazul, էջ 154—155։

<sup>3</sup> Giurescu C. Constantin, Istoria Romînilor, vol. II, partea I, București, 1937, էջ 259։

<sup>4</sup> Hurmuzaki, Documente, XII, էջ 440—441։

<sup>5</sup> M. Roller, Istoria R. P. R., București, 1952, 175—176։

<sup>6</sup> A. D. Xenopol, Istoria Romînilor din Dacia Traiana, vol. V, București, 1927, էջ 265—266։

<sup>7</sup> P. P. Panaitescu, Mihai Viteazul, էջ 210—211։

<sup>8</sup> Ահա այս փաստաթուղթի բովանդակությունը. „Sacratissimae Maiestati Vestrae Caesareae devotissime ac supplex significo, me in exequendis Sacratissimae Maiestatis, Vestrae Caesareae negotiis ex numero meorum servitorum singulatim quendam dic-

Եվ իսկապես Միխայի համարումը շափաղանցված չէր: Միխայի գործածած ամենատաղանդավոր դիվանագետներն մեկը Պետրոս Գրիգորովիչն էր: Իր տաղանդը երևան եկավ մանավանդ Վերը Հիշված պաշտոնի կատարման ընթացքին, երբ 1599 նոյեմբեր 20-ին Փիլզըն քաղաքը կգտնվեր և իմանալով որ այնտեղ կգտնվի նաև Ռուսիա Գողունովի պատվիրակը, Աֆանասի Վլասիև, Պ. Գրիգորովիչ կապ կհաստատուեց ցարի ներկայացուցչին հետ:

Պետրոս Գրիգորովիչի և Աֆանասի Վլասիևի տեսակցության ժամանակ, հայ դիվանագետը ցարի ներկայացուցչին հայտնեց, որ ինչպես Միխայ գրավեց Ռուսիայի վանքի և ինչպես պայքարեցավ Ռուսիայում դեմ ռուս օրվա ճանապարհի չափ՝ մտնելով թրքական սահմաններն ներս: Վլասիև պատասխանեց, թե շատ ուրախացած է իմանալով Միխայի հաջողությունները և նոր հաղթանակներ մաղթեց<sup>2</sup>:

Պ. Գրիգորովիչ ճիշտ կըմբռներ ռուս և ռումեն ժողովուրդներու բարեկամության իմաստը և համոզված է ըլլալով այս իրողության, Միխայի կողմն այս ուղղությամբ որևէ հանձնարարություն չունենալով հանդերձ, անձամբ ներկայացավ Վլասիևին, գիտնալով, որ Գողունովի օգնությունը մեծ նպաստ մը կրնա դառնալ Միխայի համար:

Միխայ կապ հաստատած է նաև Կիևի իշխանին հետ: Պետրոս Գրիգորովիչ Միխայի հանձնարարությամբ հասած է մինչև Կիև Կոնստանտին դուքսին: Թվականը հայտնի չէ, մոտավորապես 1595—1597<sup>3</sup>. Կիևի իշխանը Միխային սգնություն խոստացած է որպեսզի ռումեն իշխանը կարողանա Մոլդովան գրավել<sup>4</sup>. Պ. Գրիգորովիչի կատարած այս առաքելության մասին ուրիշ տեղեկություններ կամ փաստաթուղթեր չենք գտած:

Պետրոս Գրիգորովիչ Ա. Վլասիևի հետ առանձին քանի մը օր ետքը, 1599 դեկտ. 3-ին ճամփա կելնե, իր հետ տանելով Ռուսոլֆ Բ կայսեր պատասխանը Թրանսիլվանիո դրությամբ վերաբերյալ: Ռուսոլֆ կոնստանտնոպոլիս քանի մը օրեն պատվիրակ մը ղրկել անոր<sup>5</sup>, 1600 թ. հունվարին Պետրոս Գրիգորովիչ կհասնի Ալբա-Թուրիա գրեթե միևնույն ժամանակ Ռուսոլֆի պատվիրակին հետ, Քարլո Մանյո անունով իտալացի մը<sup>6</sup>:

Պ. Գրիգորովիչին և Քարլո Մանյոյին վերջ Ալբա-Թուրիա ժամանեցին կայսերական գործակալները, բայց ոչ Քարլո Մանյոն և ոչ ալ սույն կոմիսարները իրավասություն չունեին Միխայի պահանջները բավարարելու կամ մերժելու: Պատճառը այն էր, որ ովստրիացի կուզին Թրանսիլվանիան իրենց համար պահել առանց Միխային որևէ իրավունք տալու: Երկու-երեք ամիս կոմիսարներուն հետ բանակցելի հետո Միխայ ինքն ալ հասավ այն համոզման, որ ավստրիացիները մտադիր չեն Թրանսիլվանիան իրեն հանձնելու: Այս 2—3 ամիսներու ընթացքին (1600 փետրվար-ապրիլ), մեծ գործունեություն մը ունեցած է Պ. Գրիգորովիչ, իշխանին ուրիշ գործակալներուն հետ միասին: Միխայի անունեն հայ դիվանագետը կողջունե կոմիսարները 1600-ի փետրվարին<sup>7</sup>: Հետո բազմաթիվ անգամներ Գրիգորովիչ տեսակցություններ կունենա կոմիսարներուն հետ, երբեմն միմեկ, երբեմն ալ իշխանի և կամ ուրիշ գործակալներու հետ միասին<sup>8</sup>, 1600 ապրիլ 16-են 18, Պ. Գրիգորովիչ, Միխայի հրամանին վրա, Ալբա-Թուրիայեն կեկնի Սիրիու այստեղի քաղաքացիներեն դրամ հավաքելու՝ իշխանին բանակի վարձկան զինվորները վճարելու համար: Գրիգորովիչ կվերադառնա իր հետ բերելով 4500 թալեր<sup>9</sup>, 1600 ապրիլ 19-ին, Պ. Գրիգորովիչ իր իշխանին կողմն վերջին տեսակցություն մը կխնդրե կոմիսար-

tum Petrum Armenum hactenus usum fuisse, eiusdemque fidem ac sedulitatem, non solum in variis et multiplicibus ad Sacratissimam Maiestatem Vestram Caesaream, quemadmodum eadem procul dubio recordabitur, sed etiam polonicis, moldavicis, tartaricis ac turcicis expeditionibus exploratus atque expertus". Hurmuzaki, Documente, XII, էջ 480—481 (DCCLXIV):

<sup>1</sup> N. Iorga, Istoria lui Mihai Viteazul, vol. II, էջ 24—25:

<sup>2</sup> M. Roller, Op. cit., էջ 175:

<sup>3</sup> P. P. Panaitescu, Mihai Viteazul, էջ 208:

<sup>4</sup> N. Iorga, Basta Si Mihai Viteazul, Bucuresti, 1895, էջ 281:

<sup>5</sup> Hurmuzaki, Documente, II, էջ 368 (CCLXXXVII):

<sup>6</sup> N. Iorga, Documente, noi..., էջ 25:

<sup>7</sup> N. Iorga, Istoria lui Mihai Viteazul, II, էջ 46:

<sup>8</sup> Hurmuzaki, Documente XII, էջ 687—689 (MLIII), էջ 690—693 (MLV), 693—698 (MLLX) 749—50 (MCXVI) և այլն:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 839—843 (MCCVIII), 844—846 (MCCX):

ներեն<sup>1</sup> և այս տեսակցությունն ևս որ Միխայ և իր շուրջը գտնվողները ապրիլ 24-ին կմեկնին Ալրա-Րուլիայեն<sup>2</sup>:

Հուսահատելով և տեսնելով, որ ավստրիացիները միայն իրենց շահերը կհետապնդեն, Միխայ և իրեն մեկտեղելով մտածելու, որ թուրքերու հետ միացումը ավելի շահարկեր պիտի բերար Միխայ կապառնա ավստրիացիներուն, որ եթե չպիտի հավանին իրեն օգնել ինք պիտի միանա թուրքերուն հետ և պիտի հարձակի Ավստրիո վրա<sup>3</sup>: Պետրոս Գրիգորովիչ հակառակ էր այդ պիտի քաղաքականության մը և միշտ կհանար Միխայը համոզել, որ միայն Ավստրիան կրնա իրապես օգնել իրեն և միայն Ավստրիո օժանդակությունը կրնա իր գոյության երաշխիքը բերել<sup>4</sup>:

Առանց ստանալու կայսեր որոշ պատասխանը, ինչ որ անգամ մը ևս կապացուցանե ավստրիացիներու դանդաղությունը և անվճռականությունը, Միխայ ստիպված էր պարզել Մոլտովայի դիրքը: Միխայ կորոշեց գրավել Մոլտովան և արագ կերպով կգործադրե այս գաղափարը: Մոլտովայի ազնվականները լավ շրջագծեցին Միխային, որովհետև գիտեին թե ուժեղ իշխան մը ունենալով, իրենց դիրքը կտկարանար: Միխայ իրեն հավաստիմ քանի մը անձեր ձգեց Մոլտովա և ինք ուղղվեցավ դեպի Թրանսիլվանիա, Րուտով Բ-ի պատասխանը առնելու համար: Այս շրջանին Միխայ ինքզինքը Մունչենիայի, Թրանսիլվանիայի և Մոլտովայի իշխան կանգնեց, և ռումեն երեք իշխանապետությունները կմիանան այսպես, բայց շատ կարճ ժամանակի մը համար:

Թրանսիլվանիա վերադառնալով Միխայ կրցավ տեսակցիլ կայսեր լիազորներուն հետ, որոնք նոր ժամանած էին: Կայսրը այս անգամ պատրաստ էր որոշ զիջումներ րնել, բայց այլևս ոչ էր: Հունգարացի ազնվականները միացած էին և կմերժեին Միխայի տիրակալությունը: Անոնց միացած էր Պասթա գորավարը (որ անցած էր հունգարացի ազնվականներուն կողմը, թեև կայսերական ներկայացուցիչ էր):

1600 օգոստոս 18-ին, Պ. Գրիգորովիչ Միխայի հանձնարարությամբ նամակ մը կղրկե կայսերական ներկայացուցիչ-կոմիտարներուն (Michael Zekel և David Ungnad) հայտնելով, որ Սիգիսմունդ Բախտի և Moises Zekelj (հունգարացի ազնվական) դավադրություն մը կսարքեն և բանալ կհավաքեն կայսեր դեմ պայքարելու համար: Պ. Գրիգորովիչ կինդրե, որ կայսրը և կոմիտարները պետք եղած միջոցները ձեռք առնեն սահմաններու անվտանգությունը պահպանելու համար<sup>5</sup>: Moises Zekelj հետապնդելու համար, Պ. Գրիգորովիչ, քանի մը օգնականներով, Միխայի հրամանով ճամփա կելլե<sup>6</sup>:

Հունգարացի ազնվականները և Պասթա գորավարը կուգեին ամեն դինով Միխայը և իր զորքերը վտարել Թրանսիլվանիայեն: Միակ միջոցը պատերազմն էր: Կռիվը տեղի ունեցավ Այուտ քաղաքին մոտ, Միրբսլըու կամ Միրիսլըու կոչված գյուղին մոտ: Կռիվին կմասնակցեին նաև Պետրոս Գրիգորովիչ, որ շատ առաջացած ըլլալով բռնված էր Պասթայի կողմը: Ռումեն պատմաբաններ Ն. Իորդա<sup>7</sup> և Փ. Փ. Փանայթևսու<sup>8</sup> այն կարծիքը կհայտնեն, թե Պ. Գրիգորովիչ մինչև վերջը հավատարիմ չէ մնացած Միխային, այլ ռումեն իշխանին թշնամիներուն կողմը անցած է: Եվ սակայն տարբեր բան կհաստատե ժամանակակից վավերաթուղթ մը (1600 սեպտ. 19), որ Միրբսլըուի կռիվը կնկարագրե<sup>9</sup>:

<sup>1</sup> Hurmuzaki, Documente, XII, էջ 848—851 (MCCXVI):

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 864—868 (MCCXXII):

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 779—781 (MCXLVI):

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 864—868 (MCCXXII):

<sup>5</sup> Նույն տեղում, IV, էջ 107 (XCVI):

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 112 (CII):

<sup>7</sup> N. Iorga, Istoria lui Mihai Viteazul, II, էջ 100:

<sup>8</sup> P. P. Panaitescu, Mihai Viteazul, էջ 209:

<sup>9</sup> „Hierzwischen hat man beiderseits mit grossen Stücken hart uf einander geschossen und obwoln die unseren wol getroffen, ist doch entgegen den unsern wenig Schaden geschehen, und als sich Örmeni Peter zur weit hervor gelassen, von den unsern gefangen worden, welchen Er Basta zu verwaliren Befelch geben“ (սկսած իրենց երկուստեք խիստ ուժեղությամբ իրար կռուելով: Թեև մերոնք ենթակա եղան հարվածներին, այնուամենայնիվ քիչ վնասվեցին, և երբ հայազգի Պետրոսը շատ առաջացած լինելով մերոնց կողմից գերվեց, Er Basta-ի հրամանով փականքի տակ առնվեց): Andrei Veress, Documente, VI, էջ 192—194:

Այս փաստաթուղթի բովանդակություններն կարելի է եզրակացնել, որ Պ. Գրիգորովիչ չէ գա-վաճանած, այլ կովի ընթացքին շատ առաջանալով գերի բռնված է:

Պ. Գրիգորովիչի գավաճանության ակնարկողները ուրիշ փաստ մը ևս մեջտեղ կրերեն, հիմնվելով այն բանի վրա, որ գերի իյնալեն հետո Գրիգորովիչ նամակ մը գրած է Ռուտուֆ Բ-ին խեղդելով, որ իրեն արժանացած դուժարը վճարվի: Ոմանք կկարծեն, որ Պ. Գրիգորովիչի Պաս-թայի կողմը անցնելը առաջուց կարգադրված էր և ասոր համար հայ գիվանազետը պիտի ստա-նար որոշ դուժար մը: Պետք է բնել սակայն, որ նույնիսկ կայսեր ուղղված այս նամակին մեջ, Պ. Գրիգորովիչ կշեշտե, որ ինքը հավատարիմ մնացած է Միխային և շատ երկիրներ և վտան-գավոր տեղեր գացած է Միխայի հանձնարարությամբ հոգուտ քրիստոնեության շահերուն: Պ. Գրիգորովիչի նամակին նպատակը այն էր, թե ինք իբրեւ գերի չնկատվի, մանավանդ որ կայսրը շատ պետք ուներ իրեն պես անձի մը, որ լավ ծանոթ էր արևելյան ժողովուրդներու լեզուներուն և սովորություններուն: Պ. Գրիգորովիչ կձգտեր որքան կարելի է օգուտ քաղել իր գերի իյնալեն: Պ. Գրիգորովիչ ճանչցված ըլլալով որպէս ավստրիացի քաղաքականության հետևող, լավ ընդունվեցավ ավստրիացիներուն կողմէ և գուցէ իր մտադրությունը այն եղած ըլլար, որ իր ունեցած այս նոր գիրքը օգոստոսներ ի նպաստ Միխային:

Միքրսլուի կոիլին մեջ Միխայի հաղթվեցավ Պասթայի և իր հետ միացած հունգարացի ազնվականներու կողմէ: Միխայի սահմանադրված քաշվիլ, մանավանդ որ լեհացիները ներխուժած էին Մոլդովա և կառաջանային դեպի Մունթենիա: Միխայի ընդունեց Պասթայի բոլոր պայման-ները և ինք ուղղվեցավ դեպի Մունթենիա լեհացիները այստեղէն հեռացնելու համար: Երկու իրարու հաջորդող կռիվներու մեջ Միխայի պարտվեցավ սակայն, և իր զորքը ջախջախվեցավ լե-հացիներու կողմէ:

Միխայի հասավ այն եզրակացության որ միայն Ռուտուֆ Բ կրնա օգնել իրեն: Ուղղվեցավ դեպի Վիեննա, ուր մնաց մինչև 1601 մարտ: Ավստրիացիները իրեն ուշադրություն անգամ չպիտի դարձնէին, բայց Թրանսիլվանիո դրոյությունը կրկին փոխված էր: Սիգիսմունդ վերագար-ծած և հունգար ազնվականներուն գլուխն անցած էր: Ավստրիացիները այնպէս կարգադրեցին, որ Միխայի և Պասթա հաշտվին և միասին հարձակին Սիգիսմունդի վրա: Կոիլը տեղի ունեցավ Գորբսլու գյուղին մոտ, Սոմեշ գետին վրա: Սիգիսմունդ և իր արքայակները հաղթվեցան 1601 օգոստոս 3-ին: Քանի մը օր վերջ, օգոստոս 9-ին, Պասթա քանի մը անհասկացողությանց հե-տևանքով և ցանկանալով, որ միայն ինքը մնա Թրանսիլվանիո տերը, իրեն վստահելի քանի մը զինվորներ կղրկէ Միխայի մոտ, որոնք վրանին մեջ կսպանեն ռումէն իշխանը: Այսպէս կմեռնի Քաշն Միխայի, որուն ութնամյա իշխանության օրով արթնցան ռումէն ժողովուրդի ազատագրա-կան զգացումները և հիմնաքարը դրվեցավ ռումէն իշխանապետությանց միասնականության գաղափարին<sup>2</sup>:

Ռումէն իշխան Քաշն Միխայի թեւ միայն 8 տարի իշխած է (1593—1601), սակայն ան ծանոթ է ռումէն պատմության մեջ որպէս առաջինը, որ հղացած և իրականացուցած է, թեւ շատ կարճ ժամանակի համար, ռումէն երեք իշխանապետությանց միացումը:

Քաշն Միխայի փորձը ժամանակավոր հաջողություն ունեցավ, երբ թրքական կայսրությունը մեծ տազնապի մը մեջ կգտնվէր ԺԶ դարու վերջավորության: Հարավ-արևելյան կողմէն Պարս-կաստանի տիրակալ Շահ-Աբբասը (1587—1628), հյուսիս-առեւմտյան կողմէն Ավստրիական կայսրության զորամասերը, ինչպէս նաև ջալալիներու ապստամբությունները ծանր դրության մը մատնած էին Օսմանյան պետությունը: Բայց ո՛չ երկրին զարգացման տնտեսական ու քաղաքա-կան ընթացքը, և ո՛չ ալ ազգային գիտակցությունը այնքան զարգացած չէին, որպէսզի ամրա-պնդէին ռումէն միացյալ պետություն մը: Միխայի չկրցավ և չէր էլ կարող ճորտերը և գյուղա-ցիները իր կողմը շահիլ, այլ, ընդհակառակը, իր մղած պատերազմներուն համար մեծ գումար-ներու պետք ունենալով՝ տուրքերով անդադար կկեղեքէր գյուղացիները<sup>3</sup>: Եվ եթէ իր փորձը ժամանակավոր հաջողություն ունեցավ՝ միայն քաղաքական արտաքին հանգամանքներու բե-րումով էր:

<sup>1</sup> Hurmuzaki, Documente, XII, էջ 1048—1049 (MDXI):

<sup>2</sup> Քաշն Միխայի վերաբերյալ գրեթէ բոլոր պատմական տվյալները քաղված են հե-տևյալ աղբյուրներէն՝ acad. Mihail Roller, Istoria R. P. R., Bucuresti, 1952 և N. Iorga, Istoria Ruminilor, Valenii de munte, 1937.

<sup>3</sup> Stefan Pascu, MiScari țaranești prilejuite de intrarea lui Mihai Viteazul în Transilvania («Studii și materiale de istorie medie, vol. I, București, 1956, էջ 123—125):

Ռուսներն իշխանը հաջողելու համար պետք ուներ լավ դիվանագետներու, որոնք լավ ըմբռնեն իր գործունեության ընթացքը: Այդպիսին եղավ Պետրոս Գրիգորովիչ տաղանդավոր հայ դիվանագետը, որը հաջողությամբ կատարեց Միխայի կողմեն իրեն հանձնված պաշտոնները:

Պետրոս Գրիգորովիչ բնիկ լվովցի էր: Արհեստով դիվանագետ չէր, այլ սրբապատկերներու նկարիչ<sup>1</sup>: Իր ծննդյան թվականը հայտնի չէ, գոնե մեր քննած գրականության մեջ: Չենք գիտեր թե ինչ առիթով մտած է Քաջն Միխայի ծառայության մեջ և ինչպես նվիրված է դիվանագիտության:

Դիվանագիտությանն ղառ, Քաջն Միխայի ծառայության տակ ան ստանձնած է նաև զինվորական պաշտոններ, Միխայի գլխավորությամբ զինվորներ ղեկավարելով Պուլկարի մեջ թուրքերու դեմ:

Պետք է ենթադրել, որ Պետրոս Գրիգորովիչ լավ ուսում ստացած էր և ուներ դիվանագետներ մը պահանջված գիտելիքները: Ինք կտիրապետեր լատիներենին<sup>2</sup>, որ ժամանակի դիվանագիտական լեզուն էր, լավ տեղյակ էր նաև ռուսներենին, գերմաներենին, իտալերենին և բնականաբար իր մայրենի լեզվին, հայերենին: Ան կստորագրեր հայկական տառերով<sup>3</sup>:

Պետրոս Գրիգորովիչ Միխայի համար պարզ դիվանագետ մը չէր, որ կգրադեր միայն իրեն ստանձնած պաշտոններու կատարմամբ, այլ ան իշխանին առաջնակարգ խորհրդատուներեն մեկն էր: Ժամանակակից վավերաթուղթերը կնշեն այս իրողությունը և ցույց կուտան նույնպես, թե ինչ վստահություն ուներ Միխայ հայ դիվանագետին հանդեպ: Օրինակ, երբ Միխայ գրավեց Թրանսիլվանիան, ավստրիացիք կջանային որևէ միջոցով հեռացնել զայն գրավված երկիրը իրեն համար պահելու զաղափարեն: Այս նպատակով Միխայի շուրջը կգտնվեր Դիոնիսիոս Բալլի միտրոպոլիտը, որ իշխանին խորհուրդ կուտար թուրքերու դեմ պատերազմիլ, այսինքն մեկ խոսքով Թրանսիլվանիան ավստրիացիներուն հանձնել<sup>4</sup>: Միտրոպոլիտը գրեթե հաջողած էր համոզել իշխանը, բայց միջամտեցին Պետրոս Գրիգորովիչ և ռուսներ ազնվականները, որոնք այս գաղափարը հեռացուցին Միխայի մտքեն<sup>5</sup>: Ավստրիական դիվանագիտության գործակալ Պաոլո Զիրոջիո, Ավստրիո կայսեր ուղղված տեղեկագրերության մը մեջ կգրե հետևյալը Միխայի և վերահիշյալ դեպքի մասին խոսելով «Ma puoi muto l'opinione a persuasione di Petar Armeno et di baroni Valachi»<sup>6</sup>:

Ավստրիական գործակալ մը՝ Փարլո Մանյո (Carlo Magno), 166 Վենետիկի 2-ին Այրա-Իուլիա գրված տեղեկագրերության մը մեջ իմիջիայլոց կհիշե, որ Պետրոս Գրիգորովիչը պաշտոնը մեծցած է, ան դարձած է Միխայի երեսփոխանը և ժամանակավոր ներկայացուցիչը<sup>7</sup>: Միխայ այնքան լավ համարում ուներ Պետրոս Գրիգորովիչի մասին, որ ավստրիացի կոմիսսարներու հետ ունեցած զաղտնի տեսակցության մը ընթացքին իր հետ ստորած է միայն հայ դիվանագետը<sup>8</sup>, մանավանդ որ ան կրնար սահուն կերպով գերմաներեն-ռուսներեն և ռուսներեն-գերմաներեն թարգմանել<sup>9</sup>: Ինչ կվերաբերի ուրիշ փաստաթուղթի մը<sup>10</sup>, բայց որու Պ. Գրիգորովիչ կցանկար Միխային հաջորդել գահի վրա և իշխանական կալվածներ խլել իրեն համար: Այս բոլորը պետք է վերագրել ավստրիացիներու կասկածոտ քաղաքականության, իսկ վավերաթուղթը շփոթություններ պատճառելու իմաստով գրված է Փարլո Մանյոյի կողմ, 1600 հունվարի 1-ին:

Պետրոս Գրիգորովիչ ոչ միայն Միխայի ամենափորձառու դիվանագետներեն մին էր, այլ իր ժամանակի Արևելքի գործերեն լավագույն հասկացողներեն մեկը եղավ:

<sup>1</sup> Քաջն Միխայի քարտուղար մի Իոան Տարահի 1591—1600-ի շուրջ գրած տեղեկագրերության մը մեջ կգրե թե Գրիգորովիչ նկարիչ էր և միասին աշխատելով, իշխանի պահանջին վրա կեղծած են Ավստրիո կայսերական կնիքը, քաղաքական նպատակի մը համար (Hurmuzaki, Documente, III, Bucuresti, 1880, էջ 427—443, CCCXL):

<sup>2</sup> I. Craciun, նշվ. աշխ., էջ 79:

<sup>3</sup> N. Iorga, Armenii si rominii-o paralela istorica, Bucuresti, 1913, էջ 28:

<sup>4</sup> P. P. Panaitescu, Mihai Viteazul, էջ 83:

<sup>5</sup> Hurmuzaki, Documente, XII, էջ 741 (MCVIII):

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 664 (MXXVII):

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 695—698 (MLIX):

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 851—856 (MCCXVI):

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 618—619 (CMLXXVII):

## 3. ՊԵՏՐՈՍ ԳՐԻԳՈՐՈՎԻՉԻ ԶԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Բուտովֆ Բ և ռումեն իշխանները, Միխայի մահեն վերջն ալ Պ. Գրիգորովիչը կօգտագործեին որպէս դիվանագիտական գործակալ: Կարճ կերպով պիտի թվենք հայ դիվանագետի կատարած հետագա պաշտոնները: 1601, սեպտ. 9-ին Պետրոս Գրիգորովիչ և Ալոիսիո Բատիրբաստ (Aloysio Radibradt) Բուտովֆ Բ-ի կողմէ Մունթենիա կղերկին: 1602 ապրիլ 10-ին Պետրոս Գրիգորովիչին գումար մը կհանձնվի որպէս ճամփու ծախս մասնավոր պաշտոնի մը համար: 1602 օգոստոս 21-ին իրեն 1000 ֆլորին կհանձնեն իբրեւ ճամփու ծախս Մունթենիա կատարվելիք պաշտոնի մը համար<sup>3</sup>: 1603 սեպտեմբեր ամսու ընթացքին, Պետրոս Գրիգորովիչ Պրագայի մեջ պաշտոն մը կկատարու Մունթենիայի իշխան Բատու Շերբանի կողմէ ղրկված<sup>4</sup>: 1604 հունվար 20-ին կայսեր կողմէ կղերկվի Խրանսիլվանիա<sup>5</sup>: 1604 տարվայն ընթացքին Պետրոս Գրիգորովիչ ուրիշ պաշտոններ կկատարու Բուտովֆ Բ-ի հանձնարարութեամբ: Փետրվար 21-ին տեղեկարարութիւն մը կներկայացնէ Մունթենիայի մեջ տիրող դրութեան շուրջ<sup>6</sup>: Հուլիսին Բուտովֆ Բ-ին առաջարկութիւններ կներկայացնէ, Ալոիսիո Բատիրբաստի հետ, Մունթենիայի դրութեան մասին. երկու դիվանագետները կհորդորեն կայսրը, որ օգնէ Բատու Շերբանին և իր շուրջը գտնվող աղնականներուն նվերներ բաժնէ: 1604 օգոստոս 1-ին, այս առաջարկներու ազդեցութեան վրա Բուտովֆ 2000 զինվոր կղերկէ Բատու Շերբանին, իսկ դրամը և ազգամթերքը կղերկին Պետրոս Գրիգորովիչի միջոցով<sup>7</sup>: 1606 հունվար 10-ին Պ. Գրիգորովիչին կրկին գումար մը կհանձնվի իբրեւ ճամփու ծախս Մունթենիա: կատարվելիք պաշտոնի մը համար<sup>8</sup>:

Ըստ 1607 օգոստոս 27-ի վավերաթուղթի մը կերեի թէ Պետրոս Գրիգորովիչ Ավստրիո Կ. Պոլսի դեսպան անվանված է: Մարիո դի Քավալլի Վենետիկի դեսպանը Պրագայէն տեղեկարարելով Վենետիկի դուքսին, կըսէ թէ Պետրոս Գրիգորովիչ Կ. Պոլսո դեսպան անվանված և Բուդայի թուրք փաշային անձադրովր ճամփա ելած է<sup>9</sup>:

Իհարկէ սխալ է այն տեղեկութիւնը, թէ Պ. Գրիգորովիչ ռազուզացի է, բայց այս փաստաթուղթը ցույց կուտայ, թէ ինչ համբավ և վստահութիւն շահած էր Պ. Գրիգորովիչ Ավստրիո դիվանագիտութեան մեջ: Ան հիշված է որպէս Ավստրիո Կ. Պոլսո դեսպանը կամ առնվազն իբրեւ թեկնածու այս պաշտոնին: Նկատի առնելով Պ. Գրիգորովիչի փորձառութիւնը արեւելեան խնդիրներու մեջ և այն հանգամանքը, որ ան կտիրապետէր արեւելեան լեզուներուն, ավստրիացիք որոշած են, որ ան ըլլա Կ. Պոլսո դեսպան: 1606-ին արդեն Պ. Գրիգորովիչ շատ լավ տեսնված էր ավստրիացիներու կողմէ: 1606 մայիս 1-ին Բուտովֆ Բ Լեհաստանի Սիգիսմունդ Գ թագավորին ուղղված նամակի մը մեջ կգանգատի, որ Պ. Գրիգորովիչ՝ Լեհաստանի մեջ առաքելութեան մը ընթացքին իր նամակները և գույքերը գրավված են: Կայսրը անձամբ կխնդրէ Լեհաստանի թագավորէն, որ գրավված իրերը վերագարծվին հայ դիվանագետին<sup>10</sup>: Պետք է ուրեմն ենթադրել, որ Պ. Գրիգորովիչ կարեոր աստիճան մը ունէր ավստրիական դիվանագիտութեան մեջ, եթէ կայսրը անձամբ նամակ կգրէր իր գործակալին կրած անարգարութիւններէն զանգատելու համար:

<sup>1</sup> Hurmuzaki, Documente, XII, էջ 1230—1232 (MDCCCX, MDCCCXI, MDCCCXII, MDCCCXIII, MDCCCXIV):

<sup>2</sup> Andrei Veress, Documente, VII, էջ 17:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 69:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 160:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 191:

<sup>6</sup> Hurmuzaki, Documente, IV, էջ 368 (CCCXV):

<sup>7</sup> Andrei Veress, Documente, VII, էջ 217—218:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 261:

<sup>9</sup> „Havendo Sua Maesta havuta la risposta di quello che ha negotiato Cesare Gallo coi Turchi... prima d'espedit l'ambasciator... se risoluta d'espedit con passaporto del Bassa di Buda a Constantinopoli quel Pietro Armeno, che, se bene e chiamato così, e pero creduto esser Raguseo, et si tratteneva qui servendo d'interprete delle lingue“. *Բնագիրը տե՛ս* R. Archivio di Stato, Venezia. Dispacci di Germania (Andrei Veress, Documente, VIII, էջ 27:)

<sup>10</sup> Andrei Veress, Documente, VII, էջ 270:

Քանի մը փաստեր կվկային, որ Պետրոս Գրիգորովիչ կփայփայեր Օսմանյան տերության գեմ Հարավային և Արևելյան Եվրոպայի պետություններու և Պարսկաստանի դաշինքի գաղափարը։ Սիգիսմունդ թագավորը, Սևեռ Մուրադովիչ անունով հայ մը ղրկած է Պարսկաստանի շահին՝ զայն զրգուելու համար Օսմանյան կայսրության գեմ, ճամփորդությունը տեղի ունեցավ 1602-ին և Մուրադովիչ Վարչավիային մեկնելով անցավ Լվով, անկե Մոլոդավա, Մանգալիային նավ նստավ մինչև Տրապիզոն, ուրկե շարունակեց իր ճանապարհը։ Շահին հետ տեսակցության ժամանակ, Մուրադովիչ խոսեցավ նաև Քաջն Միխայի հաջորդությանը և մանավանդ Սինան փաշա վեզիրի կրած պարտության մասին<sup>1</sup>։

Հարավ-արևելյան Եվրոպայի պետությունները ավելի սերտ կապ հաստատեցին Պարսկաստանի շահին հետ։ 1609-ին Պետրոս Գրիգորովիչի եղբայրը, Հովսեփ Գրիգորովիչ, Ավստրիո կայսեր կողմն ղրկված, կներկայանա Պարսկաստանի շահին<sup>2</sup>։ Հովսեփ Գրիգորովիչ հաջողեցավ իրեն հանձնված պաշտոնին մեջ և շահի խոստացավ իր զորքերը հանել Դոբրոջայի ափը (Դա-նուբի գելթային հարավային կողմը)։ Խոստումը սակայն խոստում մնաց, բայց այս խնդիրը կարգադրելու համար Պրագա ժամանեց Դավիթ արևելահայկոպոսը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի եղբայրը։ Բոլոր այս տեղեկությունները կուտա Պ. Գրիգորովիչ, 1611-ին Ավստրիո կայսեր ներկայացուցած տեղեկարարության մը մեջ<sup>3</sup>։

Արտարին վտանգեն զատ թուրքերը կգտնվեին ներքին վտանգի մը առջև ևս։ Այսպես, Քրթահայաստանի արևելյան շրջաններուն մեջ (Կարին, Երզնկա, Կամախ ևն.) կսկսի ջալալիներու ապստամբությունը։ Նազրի, Աբդուլ Հալիմ և Դելի Հասան եղբայրները կապստամբին և կովի-լով թրքական բանակներուն հետ կավերեն շատ մը քաղաքներ և գյուղեր, որոնք հայկական բնակչություն ունեին<sup>4</sup>։

Ծանոթ ըլլալով այս բոլոր դեպքերուն, Պետրոս Գրիգորովիչ XVI զարու վերջավորությունը հարմար պիտի նկատեր Օսմանյան տերության գեմ համատեղ պայքարի համար։ Հարավ-արևելյան Եվրոպայի երկրներու հակաօսմանյան այս շարժումներու ընթացքին (որոնց մասնակցած է նաև Բորիս Գոդունով ցարը)<sup>5</sup>, սուլթանը մեծ վախի մեջ էր։ Ժամանակակից փաստաթուղթ մը կրսն թե ան բնավ պալատեն դուրս չէր ելլեր և կուզեր ամեն գնով հաշտություն կնքել քրիստոնյա երկիրներուն հետ։ Նույն փաստաթուղթը կխոսի կարգ մը ապստամբություններու մասին, որոնք տեղի ունեցած են Հայաստանի մեջ<sup>6</sup>։

Այս ապստամբությունները հիշելով ն. Խորգա կրսն թե շատ հավանական է, որ Պ. Գրիգորովիչն ալ խառնված ըլլա այս շարժումներուն մեջ և մանավանդ ինքն ալ քաջալերած ըլլա իր հայրենակիցները<sup>7</sup>։ Այս հարցի պարզաբանումը, իհարկե, լրացուցիչ փաստերու կարիք ունի։

Ըստ մեր քննած փաստաթուղթերուն Պ. Գրիգորովիչ իր վերջին դիվանագիտական պաշտոնները կատարած է 1611—1612 տարիներու ընթացքին։ 1611 մայիս 27-ին Րատու Շերբան իշխանին կողմն կղրվի կայսեր մոտ<sup>8</sup>, իսկ նոյեմբեր 26-ին Հոնգարիո փոխարքային մոտ<sup>9</sup>։ 1612 հունվարին Պրագայի մեջ Պետրոս Գրիգորովիչ և Վալենթինուս Սերաֆինուս առաջարկներ կներկայացնեն Մոլոդավայի իշխանին և անոր վարած քաղաքականության շուրջ<sup>10</sup>։ 1612-են մինչև իր մահը (1616) ուրիշ տեղեկություններ չունինք Պ. Գրիգորովիչի գործունեության մասին։

Տաղանդավոր դիվանագետու ունեցած է նաև դրական գործունեություն մը։ Մեզի ծանոթ չեն անոր գործերը, կրնանք սակայն զանազան փաստեր իրարու բով բերելով հետևեցնել, որ Պետրոս Գրիգորովիչ զրած է Քաջն Միխայի քրտնիկոնը, որ կորսված է ժամանակի ընթացքին։

<sup>1</sup> N. Iorga, Studii Si documente cu privire la istoria rominilor, vol. XI, București, 1906, էջ 125—127։

<sup>2</sup> Նույն տեղում, vol. IV, էջ 144—149։

<sup>3</sup> Նույն տեղում։

<sup>4</sup> H. Dj. Siruni, Armenii în viața economică a Tarilor Române, București, 1944, էջ էջ 12։

<sup>5</sup> Hurmuzaki, Documente, XII, էջ 568—569 (CMXX)։

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 452—453 (DCCX) (փաստաթուղթը գրված է իտալերեն, 1599, սեպտ. 5 թվականով)։

<sup>7</sup> N. Iorga, Armenii Si rominii, o paralela istorica, București, 1913, էջ 28։

<sup>8</sup> Hurmuzaki, Documente, IV, էջ 438 (CCCLXXIII)։

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 446 (CCCLXXX)։

<sup>10</sup> Andrei Veress, Documente, VIII, էջ 216—217։

Թեև ուղղակի չենք կրնար ծանոթանալ Պետրոս Գրիգորովիչի մատենագրության, բայց այժմ ապացուցված է, որ հունգարացի մատենագիր մը Szamoskozy անունով, որ Պ. Գրիգորովիչի ժամանակակից էր, օգտագործած է անոր երկր իր մեկ գործին մեջ, որ պահված է և ուր հունգար մատենագիրը կրնա թե օգտագործած է հայ դիվանագետին գործը իբրև աղբյուր<sup>1</sup>, նույնիսկ համավանդներ տալով անոր գերծեն: Ռումեն սլավագիր Ի. Քրըչուն, որ ուսումնասիրած ու հրատարակած է հունգար պատմագրի գործը՝ կհաստատեն ինքն ալ, որ Szamoskozy լայնորեն օգտագործած է Պետրոս Գրիգորովիչի երկր: Հունգար մատենագրի խոստովանութենեն զատ ունին ուրիշ տվյալներ ևս, որոնք կապացուցանեն Պ. Գրիգորովիչի այդ աշխատության գոյությունը: Այսպես, Քաջն Միխայ թուրքերուն դեմ իր ունեցած հաջողությունները ծանոթացնելու համար Արևմտյան Եվրոպայի շրջանակներուն մեջ, հիշատակարան մը ղրկած է Թոսթանայի Քոսիմո դուքսին, որ «Սուրբ Բնկերության» անդամ էր: Այս հիշատակարանը այսօր ծանոթ է և հրատարակված է<sup>2</sup>: Սույն հիշատակարանը Միխայի իսկական մեկ կենսագրությունը կներկայացնե՞ր: Ըստ Ի. Քրըչուն պատմագետին, Թոսթանայի դուքսին ուղարկված հիշատակարանը կներկայացնե ամփոփումը Գրիգորովիչի աշխատության: Իր հիշյալ գործին մեջ Ռումեն պատմագիրը ապացույցը կուտա այս իրողության, ինչ որ լիովին կհաստատեն Պ. Գրիգորովիչի հեղինակած երկասիրության գոյությունը: Փ. Փ. Փանայկեսբու կկարճե, որ հավանաբար Պ. Գրիգորովիչ, ավստրիական շրջանակներու համար ալ գրած ըլլա Քաջն Միխայի կյանքին և գործունեության շուրջ բրոնխիտն մը<sup>3</sup>: Թե Թոսթանայի դուքսին ուղարկված հիշատակարանին, թե ավստրիական շրջանակներու համար գրված երկի համար իբրև աղբյուր գործածված է Պ. Գրիգորովիչի գործը:

Պ. Գրիգորովիչի գործը իսկական երկասիրություն մը չէր, այլ ավելի ճիշտ՝ օրագրություն մը: Ամեն օր կամ քանի մը օրը անգամ մը հայ դիվանագետը կնոթագրեր կատարված եղելությունները իր օրագրության մեջ:

Ապացույց մը ևս կա, որ ցույց կուտա թե Պ. Գրիգորովիչ շատ ճշգրիտ տեղեկություններ կուտա, տեղեկություններ, զոր ստացած է իշխանին ամենամտերիմներին մեկը եղած ըլլալուն հետևանքով: Այսպես, օրինակ, այսօր գոյություն ունին Քաջն Միխայի ծագման մասին քանի մը կարծիքներ, զոր հայտնած են պատմագիրները և կամ ստեղծած է ժողովուրդը ինքր: Հայտնված բոլոր կարծիքներեն պատմագիտականորեն ամենին ճիշտը Պ. Գրիգորովիչի ներկայացուցածն է<sup>4</sup>, ըստ որում իշխանը աղբատ մեծցած է, թեև իշխանական տոհմե կսերեր հոր կողմե, իսկ մայրը օգի կծախեր: Նախքան իշխանության գլուխ դալը Միխայ ղրկած է վաճառականության մը՝ Դանուբի հարավային շրջաններուն, Մոլտովայի և Մունթենիայի մեջ:

Szamoskozy-ի մատենագրության և Պետրոս Գրիգորովիչի օրագրության միջև նմանություններ գոյություն ունին մինչև 1598 թվականը: Այս թվականեն ետք հունգար պատմագրին գործը չթվիր ներշնչված ըլլալ հայագրի դիվանագետի գործեն: 1598-ին Szamoskozy կղբալեր Թրանսիլվանիո Ալբա-Թուրիա քաղաքը և նույն թվականին այնտեղ կծամաներ Պ. Գրիգորովիչ: Դիվանագիտական պաշտոնով մը: Շատ հավանական է, որ հունգար պատմիչը խնդրած ըլլա Պ. Գրիգորովիչին իր գրած օրագրությունը և ան համաձայնած ըլլա տալ զայն:

Պետրոս Գրիգորովիչի օրագրությունեն օգտված է ուրիշ պատմագիր մը ևս, Wolfgangi de Bethlen անունով, որ վեց հատորով Թրանսիլվանիո պատմությունը գրած է<sup>5</sup>: Սույն աշխատության շորորդ հատորին մեջ Պ. Գրիգորովիչի գրածը որպես աղբյուր կհիշվի<sup>6</sup>:

<sup>1</sup> Szamoskozy իր գործին մեջ կըսե «Ex scriptis Petri Örmény» (Պետրոս հայուն ղրկած քնններեն) — տե՛ս N. Iorga, Istoria Mihai Viteazul, I, էջ 31, իսկ ուրիշ հրատարակության մը մեջ կըսվի. «1594 et sequentibus din traditia lui Petru Armeanul» (տե՛ս Ի. Քրըչունի հիշված գործը, էջ 98):

<sup>2</sup> Angelo Pernice, Un episodio del valore toscano nelle guerre di Valacchia alla fine del secolo XVI, (Archivio Storico Italiano, seria VII, vol. II, էջ 249—297):

<sup>3</sup> P. P. Panaitescu, Mihai Viteazul, էջ 209:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>5</sup> Կկարծենք, որ Պ. Գրիգորովիչի օրագրությունը լատիներենով ղրկված էր, որովհետև այս լեզվով կգրվեին դրական-դիտական բովանդակություն ունեցող ժամանակակից գործերը:

<sup>6</sup> I. Craciun, նշվ. աշխ., էջ 52—60:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>8</sup> Bethlen Wolfgangi de, Historia de rebus Transylvanicis, editio secunda, tomus I—IV, Cibinii, 1782—1793.

<sup>9</sup> Նույն տեղում, tomus quartus, Cibinii, 1785, էջ 274:

(Relatio Petri Örmény de Michaelae Vajvoda): Բեթլեն իր ձեռքին տակ չէ ունեցած Պ. Գրիգորովիչի գործը, այլ Szamosközy-ի գործը և անուղղակի կերպով օգտված է Գրիգորովիչեն: Բեթլեն երեք չնոց մեջբերում մը կրնէ Պ. Գրիգորովիչի գործեն, որ այսպէս կսկսի. „Quod priusquam exposuerimus, placuit hic antiquum Michaelis Vajvodae statum ex scriptis Petri Örmény adjicere; qui in hunc modum tradit“<sup>1</sup>:

Հետեւաբար ուրիշ հեղինակ մը ևս օգտված է հայ դիվանագետին գործեն, և այսպիսով Արեւմտյան Եւրոպայի շրջանակները տեղեկություն ստացան Քաջն Միխայի գործունեության վերաբերյալ:

Ռումեն բոլոր պատմագիրները, որոնք զբաղած են Քաջն Միխայի շրջանով (N. Iorga, A. Xenopol, J. Sirbu, P. P. Panaitescu, J. Craciun ևն) վեր կհանեն հայ դիվանագետին հզորությունը իր երկին մէջ: Ընդհանրապէս Պ. Գրիգորովիչ ճիշտ տեղեկություններ կուտա և կնկարագրէ միայն այն եղելությունները, որոնց ինք ներկա եղած է և կամ որոնք վստահության աւժանի մարդոց կողմէ վկայված են: Դժբախտաբար իր գործը չէ պահպանած և այսօր ուրիշ աղբյուրներն պետք է տեղեկություններ քաղել իր օրագրության մասին:

#### 4. ԱՅԼ ՀԱՅ ԳԵՄԲԵՐ ԻՔՐԵՎ ԳԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ ՌՈՒՄԵՆ, ԻՇԵԱՆՈՒԹՅԱՆՑ ՄԵՁ

Պետրոս Գրիգորովիչ ոչ առաջին ոչ ալ վերջին հայ դիվանագիտական գործիչը եղած է ռումեն իշխանությանց մէջ: Ավելի վաղ Մոլտովայի մէջ ծանոթ է Վարդիկ կամ Վարդիկովիչ (Vartic, Varticovici) ընտանիքը: Այս ընտանիքին հայկական անուն ունենալը կլիաստի նիքոլայե Խորգա, ըստ որում Վարդիկ անունը կսկսի Վարդան կամ Վարդենիկ անձնանուններէն: Ըստ Խորգայի, բաղ-ժաթիվ Վարդիկներ կային Լվով քաղաքին մէջ<sup>2</sup>, Վարդիկները ազնվական դարձած են Մոլտովայի իշխան Գեորգ Բարեշի օրով (1527—1538) և երկրորդ անգամ՝ 1541—1546: Բուրաշկու Վարդիկ, օրինակ, սույն իշխանի անձնական թարգմանը դարձած է, իսկ նույն ընտանիքի ուրիշ անդամներ շատ կարեւոր դիրքեր զբաղած են Մոլտովայի հասարակական կյանքին մէջ: Անհնգմէ մեկը եղած է Մոլտովայի մայրաքաղաք Սուչավոյի ընդհանուր հրամանատարը (portar die Succeava), ուրիշ մեկը բանակի ընդհանուր հրամանատար, կամ երկրի հարստային շրջանի ընդհանուր կառավարիչը (mare dvornic al Tarii de jos) և այլն:

Մոլտովայի Փետրու Շրջորով (Պետրոս Կաղ, 1582—1591) իշխանի Կ. Պոլսի ներկայացուցիչը հայ մըն էր, Պոսթան Կեսարացի կամ Պոսթան Արմեանով (հայր) մականվամբ (Bostan din Cesaarea): Այս հայ դիվանագետը շատ օգնած է նույն իշխանին դահ բարձրանալուն, անձնապէս մեծ վեզիր Սինան փաշային ներկայացնելով դիմումագիր մը, որուն մէջ իշխանը Մոլտովայի գահը կխնդրէր<sup>3</sup>:

Ավելի ուշ Բալթանյան երկիրներու և մասնավորաբար Ռումանիո քաղաքական կյանքին մէջ կարեւոր դեր կատարած է Մանուկ բէյ Միրզայանց (1769—1817): Կարբեցի ծնողը և ծնած Խուսիւր, Մանուկ բէյ եղած է նախ սեղանավորն ու խորհրդականը երկու թուրք ավատապետներու՝ Թերսենբէրի Իսմայիլի և մասնավորն Քայրաքտար Մուսթաֆա փաշայի, որ թուրք բանակներու հրամանատարն էր, երբ սկսավ ռուս և թուրք պատերազմը 1806-ին: Մանուկ բէյ մեծ դեր կատարեց Ռուսիո հետ հասկացողություն մը գտնելու համար, ըլլա Բայրաքտարի հրամանատարութեան շրջանին, ըլլա երբ տն մեծ վեզիր դարձավ 1808-ին: Դժվար աշխատանք մըն էր, որովհետեւ Ֆրանսան կուգէր երկարաձգել պատերազմը կարելի եղածին չափ: Մանուկ բէյ իր աշխատանքները շարունակեց Մուսթաֆա Բայրաքտարի սպանութենէն հետո ալ նույն տարվան նոյեմբերին և շնորհիվ իր կապերուն, նպաստեց կնքել ռուս և թուրք հաշտությունը՝ 1812 Բուխարեստի դաշնագիրը, որու շնորհիվ ռուս բանակները ազատած էին հոգն մը, երբ քիչ վերջ նարոլեոն Ռուսիո գեմ ձեռնարկեց իր մեծ արշավին: Ավելցնենք, որ Մանուկ բէյ 1808-ին երբ իր մտերիմ Մուսթաֆա Բայրաքտար մեծ վեզիր էր, անվանվեցավ Բարձրագոյն Դրան կողմէ Մոլտովայի

<sup>1</sup> Betlen Wolfgangi de, Historia de rebus Transylvanicis, editio secunda, tomus I—IV, էջ 274:

<sup>2</sup> Documente privitoare la istoria Românilor, culese de Hurmuzaki, adunate, adnotate și publicate de N. Iorga, vol. XI, București, 1900, էջ XXIX.

<sup>3</sup> Hurmuzaki, Documente, X, էջ 155:

իշխան, առանց սակայն կարենալ վարելու պաշտոնը<sup>1</sup>։ Հիշենք նույնպես, որ Մանուկ ընդ ռուս և թուրք հաշտութենեն հետո ստիպվեցավ ինք ևս հեռանալ Բուխարեստեն, հաստատվելու համար Ռուսիա, ուր շարունակեց իր տաղանդը ի սպաս դնել ռուս պետության, ի նպաստ անոր Բալթիկյան շրջանին մեջ ունեցած հետագա ձեռնարկներուն։

ԺԹ դարու սկզբին քանի մը հայեր կարևոր պաշտոններ ստանձնած են ռումեն դիվանագիտության մեջ։ Այսպես ծանոթ են.

Սոֆիալը օղլու Արթին, որ Մուտովայի Սրարաթ Քալիմարի իշխանի (1812—1819) բորթար պաշան էր<sup>2</sup> (բորթար պաշաները իշխանին կներկայացնեին օտար պատվիրակությունները և ներկայացուցիչները)։

Հանրմ օղլու Պետրոս, որ Բարուբեհայի (դիվանագիտական ներկայացուցիչ) պաշտոն ունեցած է Մունթենիայի Կրիկորե Կիրա իշխանի (1822—1828) ծառայության տակ։ Սույն պաշտոնը վարած է հետևյալ րադաքներու մեջ. Ռուսչուր (1822), Քալաֆաթ (1822), Ճուրճու (1825)<sup>3</sup>։

1823-ին Գրիգոր անունով հայ մը Մունթենիայի նույն իշխանի նիրոբուլեի Բարուբեհան էր։ Համեմատարար ավելի մեծ պաշտոն ունեցած է Մեսրոպ անունով հայ մը, որ 1824-ին Մունթենիայի Կ. Պոլսո Բարուբեհան էր, նույն Կրիկորե Կիրա իշխանի ժամանակ<sup>4</sup>։

Հայերը 3—4 դարերու ընթացքին ռումեն իշխանապետությանը դիվանագիտական կյանքի մեջ տված են թե խոշոր դեմքեր, որոնք իրենց անձնավորությամբ ժամանակի ականավոր դիվանագետներու շարքին դասված են, թե պարզ թարգմաններ կամ ներկայացուցիչներ, որոնք վայելած են վստահություն և ջանասիրությամբ կատարած իրենց հանձնարարված պաշտոնները։

## УЧАСТИЕ АРМЯН В ДИПЛОМАТИЧЕСКОЙ ЖИЗНИ СРЕДНЕВЕКОВОЙ РУМЫНИИ

Д. ГЖРИКЯН (Бухарест)

(Р е з ю м е)

В статье автор на основе довольно богатого фактического материала излагает историю участия армян в дипломатической жизни средневековой Румынии вообще и деятельность дипломата Петроса Григоровича в частности.

Григорович был на дипломатической службе у румынского князя Михая Храброго в Мунтении (Восточная Валахия). За восемь лет своего княжения (1593—1601) Михай Храбрый стремился объединить все три румынские княжества (Валахию, Молдову и Трансильванию) и вел борьбу против турецкой экспансии. Немалую помощь румынскому князю оказывал Григорович, который выполнял не только дипломатические, но и военные поручения.

Петрос Григорович происходил из львовских армян. По профессии он был художником. Он владел несколькими языками, в том числе и восточными. Григорович был не рядовым дипломатом, а одним из первых советников князя Михая Храброго. Румынский князь ему доверял важные дипломатические дела, брал его с собой на переговоры с другими государствами. Так, например, во время своих секретных встреч с австрийскими комиссарами (1600)) Михай Храбрый в качестве своего представителя, советника и переводчика держал при себе Григоровича.

<sup>1</sup> H. Dj. S., Bairakdar Mustafa Pacha et Manouk Bey „Prince de Moldavie“, Balcania, VI, 1943, Bucarest.

<sup>2</sup> Hurmuzaki, Documente, XI, էջ LXXX—LXXXIII.

<sup>3</sup> H. Dj. S., Armenii în România—«Arhiva Romîneasca» հանդեսի մեջ, հատ. V, Պոլսի, 1910, էջ 203։

<sup>4</sup> Hurmuzaki, Documente, X, էջ 278—292։

В 1599 г. Петрос Григорович в г. Пильзене вел переговоры от имени Михая Храброго одновременно с австрийцами и представителем русского царя Бориса Годунова — Афанасием Васильевым. Еще до этого, примерно в 1595—1597 гг., Григорович по поручению Михая Храброго прибыл в Киев, князь которого обещал оказывать помощь румынскому князю в его планах.

В 1601 г., после убийства Михая Храброго, Григорович поступает на службу к австрийскому императору. Умер Григорович в 1616 г.

Автор сообщает, что Григорович составлял летопись Михая Храброго, но она до нас не дошла, и лишь в трудах различных авторов сохранились некоторые отрывки из нее.

Заключительная часть статьи посвящена дипломатической деятельности ряда других армян в средневековой Румынии.